# «Одноклассники» կայքը նաև պատմության և կյանքի դասեր է տալիս

03 March, 2009 03:57:00

**Վերջերս ադրբեջանցի և թուրք տղաները իսկական գրոհ են կազմակերպել դեպի հայ աղջիկների էջեր: Դրանք սկսվում են 5+ գնահատականներով, հաճոյախոսություններով, իսկ որոշ դեպքերում խոսակցությունն այնքան է երկարում, որ ադրբեջանցին սեր է «խոստովանում» հայ աղջկան: Սակայն այդ «խոստովանությունը» մեկ անգամով չի սահմանափակվում, նրանք սկսում են համոզել, թե իսկապես սիրահարված են և ցանկանում են հանդիպել:**

Հանդիպման վայր ընտրելն այնքան էլ հեշտ չէ՝ ներկա իրավիճակի պատճառով և, գիտեք ադրբեջանցի տղան ինչ է առաջարկում հայ աղջկան՝ ուղարկել գումար, որպեսզի վերջինս մեկնի Թուրքիա կամ Ադրբեջան: Եթե նա հանդիպած լինի ոչ սթափ դատող, դյուրահավատ և գլուխը կորցրած հայ աղջկա, ապա թրաֆիկինգի զոհերի թիվը կավելանա ևս մեկով: Հատկապես այն դեպքում, երբ նույն կայքից բերված օրինակներով մենք կտեսնենք, որ հայ աղջիկներն այնքան էլ բացասաբար չեն տրամադրված թուրք-ադրբեջանցիների հանդեպ:

«Քանի հայ կա Одноклассники-ում» խմբի թեմաներից մեկը հետևյալն էր՝ կարո՞ղ է արդյոք ընկերություն գոյություն ունենալ հայի և ադրբեջանցու միջև: Կարծիքները բազմազան էին, բայց հաճախ մտահոգիչ: Մասնակիցների մեծ մասը Ռուսաստանում ապրող հայեր են: Գաղտնիք չէ, որ այնտեղ կովկասցիները դիտարկվում են որպես այսպես կոչված «զեմլյակներ» և որոշ պահերի գուցե իսկապես մոռանում են, թե ով ով է: Մանակիցների մեծ մասը երիտասարդ աղջիկներ են և երկու միջին տարիքի տղամարդ, ովքեր արցախյան ազատամարտի մասնակիցներ են: Մասնակիցներից յուրաքանչյուրը իրավիճակը դիտարկում է իրեն ծանոթ տեսանկյունից և հիշում իր շփման շրջանակները: Եթե ազատամարտիկները ամեն կերպ փորձում են ապացուցել, որ թշնամին մնում է թշնամի և հարմար պահի ցույց կտա իր ատամները՝ երիտասարդները «հումորային դաշտում» պատմում են իրենց ադրբեջանցի «լավ ընկերների» մասին: Ստեղծված իրավիճակի մասին ճիշտ պատկերացում տալու համար մեջբերեմ մի քանի հարց ու պատասխան:

«Սխալ է երիտասարդ սերնդին սովորեցնել, որ ատի օտարին, թեկուզ նա թշնամի է»,- այս կարծիքի հեղինակը երտասարդ աղջիկ է, ով ունի ադրբեջանցի ընկերներ և ասում է, որ հաճախ երկու թուրքին երկու հայի հետ չի փոխի:
Վերջին նախադասությունը առաջին կաթիլն է եղել, որպեսզի ազատամարտիկներից մեկը բացասաբար տրամադրվի աղջիկների հանդեպ, իսկ մյուսը որոշ չափով սկսի գրեթե ստիպված

պաշտպանել աղջիկներին:

«Ես շատ ադրբեջանցի ընկերներ ունեմ: Արցախի հարցում մենք տարբեր կարծիքների ենք, բայց երկու կողմս էլ ասում ենք, թե Արցախը մերն է, բայց մենք մեկս մյուսի կոկորդը չենք կրծում, այլ կատակում ենք՝ կարծում ես Արցախը խլեցիք, հիմա ամեն ինչ կարելի է կամ՝ դուք անգամ Արցախը չկարողացաք պահել, ի±նչ պահանջենք ձեզանից»,- սա ևս երիտասարդ հայ աղջկա կարծիք է: Չնայած, որ նա նշում է, թե երկու կողմերն էլ Արցախը համարում են իրենցը, այնուամենայնիվ, կարծես մոռանում է, որ կարծիքն, ապա համոզմունքը զենք վերցնելու լավագույն առիթն է:

«Լավ ադրբեջանցի ընկերներ» ունեցող հայ աղջկան փորձում է սթափեցնել ազատամարտիկներից մեկը. «Եթե ազգի հարց լինի, քո թուրք ընկերը կռվի դաշտում կկանգնի և կկրակի քո եղբայրների վրա ՝ չմտածելով վայրկյան անգամ, թե երբևէ ընկերներ եք եղել: Կյանքում պահ է գալիս, որ հանուն ազգի մոռանում ես անգամ ընտանիքիդ մասին, ուր մնաց մտածես, թե թուրք ընկերդ լավն էր: Մենք ավելի քան 300 տարի գտնվել ենք պարսկական լծի տակ, բայց այսօր պարսիկն ազատ շրջում է Երևանի փողոցներով, իսկ քաղաքի կենտրոնում կանգնած է մի մզկիթ: Այդ ամենին մենք մեղր ուտելով չենք հասել, այլ մեր կռվով ենք ազատություն վաստակել: Բացի այդ պատմությունը վկայում է, որ Հայոց պետության սահմանը հասել է մինչև Կուր գետ և չի վերջացել Արցախով, սակայն այսօր մենք ուզում ենք պահել այն, ինչին հասել ենք մեր զենքի ուժով: 1915 թվին ձեր նման հայերին միլիոններով քշեցին անապատներն ու կոտորեցին: Նրանք էլ ունեին թուրք ընկերներ, բայց դա նրանց չփրկեց: Ի տարբերություն քեզ՝ մեր հարևանի շունը ինձ համար ավելի մեծ արժեք ունի՝ քան ամբողջ թուրք ազգը, այդ թվում քո ընկերուհիները»,- արդարացիորեն բարկացած տղամարդուն տրվում է հետևյալ պատասխանը.
«Դուք ապրում եք պատերազմով և մտածում, թե դա ճիշտ է, բոլոր մարդիկ հավասար իրավունքներ ունեն, իսկ ձեր խոսքերով թուրքերը մարդիկ չեն: Չնայած նրանք մեր օրերում իրենց թույլ չէին տա այդպես խոսել անգամ ձեր նման մարդու հետ»,- վերջինիս արտահայտման ձևից երևում է, որ այս աղջիկը պատրաստ է մինչև վերջ պաշտպանել իր թուրք ընկերներին միայն այն պատճառով, որ վերջիններս «նույն գեղեցիկ դիմակով» են ներկայանում, ինչով իրենց նախնիները Արևմտյան Հայաստանում:

Տղամարդիկ կամա թե ակամա սկսում են պատմել Հայոց պատմությունը: Գուցե աղջիկներն այնքան էլ մեղավոր չեն, քանի որ մեծացել են օտար հողում՝ զրկված լինելով սեփական պատմությունը ուսումնասիրելու հնարավորությունից, իսկ այն, ինչ սովորեցնում է օտարը հայի անունից՝ լավ արդյունքի երբեք չի բերում: Դրա լավագույն օրինակը վերջերս նույն կայքի «Միտք» խմբում վրացի մայր և հայ հայր ունեցող Նանա Բարսեղյանի կարծիքն էր Ջավախքի մասին: Վերջինս վրացական դպրոց անցած լինելու և անտեղյակության հետևանքով հայտարարում էր, թե հայերը քիչ չի օտար հողում ապրում են, մի հատ էլ համարձակվում են ասել, թե դա հայկական հող է, ապա ավելացնում, թե վաղը գուցե հայ ազգը կանգնի և հայտարարի, թե Ամերիկան էլ է հայկական հող: Կարծում եմ, սա չտեղեկացված և շատ ավելին՝ սեփական ազգի նկատմամբ անտարբեր հայի լավագույն օրինակ է:

Մասնակիցներից մեկն էլ պատմում է, որ նոր է դուրս եկել հայ-ադրբեջանական խմբից, քանի որ այնտեղ անընդհատ լարված իրավիճակ էր, ապա ավելացնում է, որ այդ խմբում ադրբեջանցին հային չի նայում որպես ընկերոջ, մենք բոլորս նրանց համար թշնամիներ ենք և ուրիշ ոչինչ: Լավ է,

երբ թշնամիդ չի թաքցնում իր հակակրանքը և դու զգուշանալու և պաշտպանվելու հնարավորություն ես ունենում: Սակայն կրկին առաջ եկող անտեղյակությունն առավել փորձառու մասնակիցներին ստիպում է դասեր տալ Հայոց պատմությունից.
«Իմ երկիրը արել են կես, իմ ազգին արել են գաղթական, իմ ազգի մեծերին դաժանաբար սպանել են, գիտե՞ս ինչի համար, որ հայ են: Մի կասկածիր՝ նորից կանեն, եթե ձեր նմաններից մեր ազգի մեջ մի 1000 հոգի լինի»,- նման թեմաների քննարկումը և գնալով խորացող լարվածությունը կարող է վիրտուալ կյանքից տեղափոխվել իրականություն, հատկապես, երբ մասնակիցները միմյանց սկսում են սպառնալ, հաշվի կանչել կամ կասկածել մեկը մյուսի արժանապատվության և հայ լինելու մեջ:

«Ամեն անգամ, երբ մենք արդարացրել ենք թուրքերին, պարսիկներին, կարևոր չի թե էլ ում՝ նրանք շատ արագ մեր հախից եկել են: Ես կոչ չեմ անում, որ սպանեք ձեզ հանդիպած թուրքին կամ ադրբեջանցուն, բայց ընկերությունն անընդունելի բան է: Մի խաբեք ձեզ, թե անձը մեղավոր չէ, դա ազգն է այդպիսին և իր ստացած դաստիարակությունը, եղեք ավելի զգույշ և խորամիտ»,- սա Արցախյան ազատամարտի մասնակցի խորհուրդն ու կոչն է, որն ամեն պահի արդիական է, իսկ միշտ զգոն ու սթափ դատելու ունակություն ունեցող անհատն ու ազգը չի կարող սխալվել, դա վկայում է պատմությունը: Իսկ ժողովրդական ասացվածքն ասում է՝ **շան հետ ընկերություն արա, բայց փայտը ձեռքիցդ մի գցիր:**

Արմենուհի Կարեյան

Powered by Vivvo CMS v4.0